

ԴԷՊԻ ՄԱՔԵՆԵԱՑ ՎԱՆՔ

Նուէր Մեսրոպ ա. ք. Մելիքանին

Յունիս ամիսն էր։ Արևը տակաւին անշօր էր իւր ջերմութեամբ ճնշելու Երևանի նահանգի Ելենովկա իջևանում ապրողներին։ Այգտեղից հինաւորաց ճանապարհով, որ գլխաւորապէս ընկած է առապարներով, երեսուն և հինգ վերստի վերայ պէտք էր գնայինք Նոր.— Բայաղիտ, ապա այնտեղից դէպի Մաքենեաց վանքը։

Ելենովկայից Ն. Բայաղիտ էր գնում նոյն երկրացի գիւղական ուսուցիչ, պ. Լևոն Խանսանամեանցը, որ մեր դիտաւորութիւնն իմանալով, ցանկութիւն յայտնեց միանալու մեզ հետ։

Եւ փոքր ինչ հանգիստ առնելուց՝ պ. Լևոնի հետ ժամը մօտ 3-ին ուղի ընկանք։ Գնում էինք սայլակով, վասն զի այդ ճանապարհի վերայ ուրիշ կառք չկայ վարձելու։ Միակ միջոցը սայլակն է, որով ամբողջ վեց ժամ ստիպուած էինք գնալ, և կարելի է երևակայել թէ ժրպիսի դրութիւն է այդքան երկար սայլակի վերայ լինել, այն էլ անցնել վեր ու վար առապարներով։

Երեք ժամից հաջիւ հասանք առաջին իջևանը, իսկ այդ ժամանակ արեն արդէն մօտեցել էր իւր վերջին հանգրուանին և, ոսկեղօծելով Գեղամայ լեռների գագաթները, երեսն էլ լուանալով Սևանայ ջրերում, պատրաստուում էր օրուայ հրաժեշտը տալ և անցնել իւր քնարանը։

Իջևանում ձի չկար։ Ստիպուած էինք ամբողջ երեք ժամ սպասել, որից յետոյ կտէրէր գիշերը, իսկ այդ տարածամ պահուն այդպիսի ճանապարհով անյարմար սեպեցիներ առաջ գնալ և որոշեցինք գիշերուայ հանգիստն առնել իջևանի կեղտոտ և յարմարութիւնից զուրկ սենեակում։

Ուր-մուր ճանապարհը, իջևաններով հանդերձ, ընկած է Սևանի ափին։

Երեկոյեան դէմ՝ սուր, Թափանցիկ հովերի հետ շարժուել էին ջրերը, իսկ փրփրադէպ կոհակներն իրար ետեից գալիս զարնուում էին ափերին և յայթուած դարձնալ յետ Թափուում ծովը:

Ժով կենցաղոյս հանապազ գիտ ալէկոծէ...

Իսկ Սեան ծովի տխրամրմունջ մոնչոցը Թէ հանապաղ և Թէ աւելիէ ալէկոծում մեր սրտերը:

Գնում են ալիքները՝ գալիս. վշշում են, փշշում, ուռչում, բարձրանում և, փրփուրն աչ ու ձախ Թափելով, հանգարաւում ու նորից նոյն պայքարը կրկնում:

Ինչ են ուզում, ինչ են փնտրում, ինչ սէր, ինչ տենչանք...

Արձանացել եմ Սեանի ափին, հայեացքս դարձրել մերթ ջրերին մերթ նորանց մէջ տեղ ընկած կղզուն, որի վերայ դարէդար կանգնած, դարէդար մրմնջում են խաչապսակ վանքերը:

Այդ վանքերի ստուերումն է ապրել Մաշտոցը, այդ խաղաղ, մենաօր անկիւնումն է Մաշտոց գրել, այդտեղ Հայոց դպրութեան մշտաժառ կանթեղը կանգնել:

Մթնաշաղի արանքում հայեացքս սեւեռեցի հարաւային հորիզոնին, ուր Գեղամայ լեռները ծրարուել էին բոցավառ ամպերի մէջ և դէպի ուր Սեանը երամբեամ տարածել էր իւր յուզուած ալիքները: Արևն արդէն մտաւ իւր արբուները, բարակ քամիներն սկսեցին աւելի սաստկանալ, մութն էլ իսպառ տիրեց և ցուրտը միանգամայն զգալի դարձաւ:

— Ինչպէս պիտի քնէք. հարցնում է ուղեկիցս:

— Ինչ քնել, հազարաւոր մտքեր ծալ-ծալ ամպերի պէս պաշարել են ինձ: Ո՛չ ապաքէն կանգնած եմ Գեղամայ Աշոտի ու Մաշտոցի շրջած տեղերում:

Մթնաշաղից յետոյ փրուկաժառ երկինքը ծածկուեց աստղերով, իսկ նորանց մէջտեղ հարսնաճեմ սկսեց առաջ գալ լուսինը:

Նայիր Սեանի ջրերին: Ցեա՛ յուսինը մտել է այնտեղ: Ցեա նորա լողը, նորա հեզ ու նազը, նորա հարսնապզընք ժպիտը: Ո՛ր կոյսի, որ հարսնացուի նախանձ չի շարժիլ:

Առագաստ է մանում արգեօք, սիրաբորբոք փեսային է դիմաւորում, Թէ Սեանի ջրերում հին-հին դարերու յիշատակներ է որոնում:

Լուսնի կաթնազոյն ստուերում զիւղն է ընկած: Եւ ինչ-

պիսի բաղդուրութեամբ յսուամ է մերթ ընդ մերթ կովերի բառաչը, ոչխարների մայիւնը և ծիծեռնակի գիշերային մեղեդին — նորա բաղդարալիւր նովտիւրնը:

Գիշերը բաւական անցել է: Ուղեկիցս արդէն բախտաւորուել է Մորփէոսի գրկույմ, սակայն բուն չի մօտենում իմ աչքին: Մտել եմ սենեակ մի չոր տառատոկի մէջ փաթաթուել, հայեացքս սեւեռել պատուհանից դէպի դուրս, դէպի Գեղամայ լեռները և անցել ցնորքների խորքը: Սյուպիսի պահուն ցնորքն է մարդուս տիրում: Ցնորք, որ Դեղալի որդուն՝ Իբարին ոգեւորեց թեւեր շինել, մինչև եթեր բարձրանալ. թէպէտ և արեւի ճառագայթների տակ մոմեղէն թեւերը հալուեցին և ինքը տապալուեց Աղբիական ծովը: Բայց ո՞վ կարող է առանց ցնորքի լինել:

Փոքր ինչ հանգստանալուց լսեցի առաւօտեան երգեհոնի դրդողը՝ ներդաշնակուած բառաչների, մայիւնների, թռչնոց մեղեդիների, հաւերի կարկաջոցի և հովուի սընգի հետ:

Դուրս եկայ սենեկից և ի՞նչ տեսարան: Հայազգի Սյւպաղովսին է հարկաւոր այդ սքանչելի տեսարաններն անմահացնելու: Արեւիքը դարձել էր մի դիւթական հնոց, որի ոսկի ցալքերը սփռուել էին Սեանի ջրերի վերայ: Լեռները փոխել էին շուրջառները և ծածկուել կապտավառ մշուշով: Իսկ Սեանը խաղաղուել էր և դարձել ըկրեղափայլ հայելի:

Կաց բանի ըողէ ևս Ցե՛ս, արեգակը, թագուհու նալով դուրս է գալիս ննջարանից: Նայի՛ր, ինչ երփներանգ շողեր է սփռում նա Սեանի երեսին և համայն բնութեան:

Ցեա նայեցի, ուղեկիցս — պ. Լեոնն էր մօտս կանգնած: Նա էլ, որ նոյն երկրացի է, (պատմական Երանոս գիւղից) որ անշուշտ բազմաթիւ անգամ ականատես է եղել այդ սքանչելի հանդիսին, բայց դարձեալ անյադ հրճուանքով և բաղդարակաթ սիրով նայում — դիտում է նախախնամութեան անհասանելի շնորհն ու ձիրքը:

Սայլակն արդէն պատրաստ էր և մենք ճանապարհ ընկանք: Առապար ուղին որքան էլ մեզ տանջում էր, սակայն մեր շուրջն ընկած բնութեան ժպիտը գրաւել էր սիրտ, հոգի և մոռացրել ամեն նեղութիւն:

Ճանապարհին այդ ու ձախ ընկած են քարոտ բլուրներ, տեղ տեղ ընդարձակ հովիտներ, մարմանդներ ու արտեր: Բայց ի՞նչ խայտաբղէտ գեղեցկութիւն: Ասես ամեն կողմ գորգեր ու ԼՈՒՄԵՑ

կապերտներ են սփռուած: Ծաղիկների առատ տեսակներն այնպէս փարթամ, այնպէս չքնաղ են, որ վաղորդեան ցօղի տակ, արևի ճաճանչները գգուելով, ցօլում էին շողուն ագամանդի, յակինթի ու զմրուխտի պէս: Իսկ պոյտերն ահագին տարածութեան վերայ այնպէս էին փռուել և կարմրին տալիս, որ հեռուից դժուար էր հաւատալ թէ՛ դորանք բնական ծաղիկներ են—վայրի ծաղիկներ, որոնք աճել են ոչ մարդկային ձեռքի խնամքով:

Մօտ երեք ժամ էլ անցանք և ահա հեռուից երևացին տներ, գրեթէ բոլորն էլ բաց կտուրներով, տեղ տեղ էլ մի քանի թիթեղի տանիքներ էին երևում և շատ սակաւաթիւ ծառերի սաղարթներ:

—Այս ի՞նչ գիւղ է—հարցնում եմ ուղեկցիս:

—Գիւղ չէ, Նոր-Բայազիտն է:

Նոր-Բայազիտն, այո՛, քաղաք է հաշւում, սակայն ո՛ր քաղաքի ձէն ունի: Հասանք, յտանք այդ քաղաքը (?), և մեր սայլակը սլացաւ գիւղական նեղ, փոշոտ փողպաններով, որոնք ընկած են զլեւորապէս մի յարկանի և մեծ մօսը կիսականգուն տների արանքով: Քաղաքի միջով բաւական տեղ անցանք և մի շինութիւն չտեսանք, որ իրաւամբ քաղաքային շինութիւն համարուէր:

Ուղեկցիս խնդրանք իջեանցի իւր հետ՝ իւր բարեկամների եղբ. Մնացական և Կարապետ Աստուածատրեանների տանը:

Լուացուելուց և ճանապարհորդին կալդուրող թէյը ընդունելուց յետոյ, մեզ հիւրասիրող եղբայրների՝ և ուղեկցիս հետ դուրս եկանք քաղաք կոչուած Բայազիդը տեսնելու:

Եւ քիչ առաջ ստացած տպաւորութիւնից աւելի ոչինչ չտեսանք: —Նոր-Բայազիդը մի գիւղ է և շատ հասարակ գիւղ: Մինչև իսկ Դիլիջանը, Ղարաբլիտան և այսպիսի մի քանի գիւղեր իրանց արտաքին բարեկարգութեամբ շատ ու շատ բարձր են քաղաք կոչուած Բայազիտից: Սակայն օդը զով է, ջրերը վճիտ, սառնորակ և քաղցրահամ:

Քաղաք կոչուած գիւղի իւրաքանչիւր անկիւնն էլ վկայում է թէ ի՞նչ ճաշակի և ինչ աշխարհայեցողութեան տէր մարդիկ են ապրում այդտեղ: Այդ առատ ջրերի մօտ և այդ մաքուր օդում թող նեղութիւն քաշեն գէթ իրանց բակերում, իրանց տների առաջ ծառեր տնկել, կանաչով զարդարել, էլ

չենք խօսում մայրերի և կանոնաւոր պողոտաների մասին։ Մի հատ քաղաքային ուսումնարան ունին, իսկ հազար տուն ունեցող զիւղին, ինչ ասել է հարկաւոր, որ այդ շատ և շատ բիւլ է։

Ժողովրդի մեծ մասը պարապում է երկրագործութեամբ։ Հողային բանկ երազ պիտի համարել, եւ խեղճ զիւղացին դռն վիճակի մէջ գտնուած ժամանակ՝ բացի վաշխառուներից աւելի տեղ չի գիւմում։ Ուր դիմէ՞ Վաշխառու աղաներն են նորանց բանկերը։ Իսկ ամենքն էլ զիտեն, թէ այդ աղաները ի՞նչ օրուան են հասցնում զիւղացուն։

Ձնայած, որ Բայադէտը իւր շրջակայ քառասնի չափ զիւղերով փոքր վիճակ չի համարուել, այսուամենայնիւ այդտեղ հոգեւոր կառավարութիւն չկայ։ Գործակալութիւն է, եւ նշանակուած է մի գործակալ վարդապետ, որին բացի միայն փողեր ժողովելուց և կոնսխտորիային ուղարկելուց, առանձին այլ իրաւունքներ չէ տուած։ Բայց և այնպէս վարդապետը միշտ խաչ ու աւետարան ունի ձեռին։ Նա կարող է միշտ քաբօղել, իսկ լաւ քարողը շատ գործ կարող է անել։

Նկանք տուն։ Խօսեցինք Մաքենեաց վանքը գնալու մասին։ Պ. Լեոնը մեծ հաճութեամբ յայտնեց իւր պատրաստակամութիւնը, պ. Մնացականը նոյնպէս։ Վերջինս, ինչպէս վերջը տեսանք, Նոր-Բայադէտի և շրջակայ զիւղերի մէջ յարգուած ու սիրուած անձնաւորութիւն է, իւր տանն էլ հիւրասէր Յարհամն էր ներկայանում։ Դիշտ այդպէս էր և իւր եղբայրը։ Պ. Լեոնը, ասացինք, Երանոս զիւղիցն էր, սակայն ծառայում էր Հին-Նախիչևան գաւառի Գուլիբէկտիլէ զիւղի պետական ուսումնարանում։ Ընդհանրապէս զիւղական ուսուցիչների մէջ պ. Լեոնն աչքի էր ընկնում իւր մտաւոր զարգացմամբ եռանդով և մատաղ սերնդի կրթութեան նուիրուած սիրով։ Եւ այս ճանապարհորդութեան միջոցին ընկերների կողմից բախտաւոր էի։ Երկուսն էլ սրտի մարդ էին, իսկ ուղեւորին սրտի մարդ է հարկաւոր։

Վճռեցինք միւս օրն առաւօտեան ճանապարհուել, Պէտք է ձիով լինայինք, իսկ իւրաքանչիւր ձի այդտեղ կարելի է վարձել օրական մի ուրլով։

Միւս օրը, երկուշաբթի, ժամը մօտ 11-ին դուրս եկանք Նոր-Բայադէտից, ճանապարհն այդտեղից մօտ վաթսուն վերստ

տարածութեամբ յիշեցնում է դէպի Ելենովկա տանող ճանապարհը, սակայն ձիու վերայ այն տանջանքը չէինք կրում, որ պիտի սպլակի վերայ, եւ պղծ ճանապարհը, որ ամբողջ ժամանակ ընկած է Սեանի ափին, տանում է մինչեւ Ալբալու կոչուած գիւղը, որից յետոյ ստիպուած էինք մօտ տասը վերստ բարոտ կածաններով, խոր ձորերով ու բլուրներով բարձրանալ դէպի Մաքենեաց վանքը:

Միջօրէի արեւ տաքացել էր, իսկ մենք շտապով ձիերն առաջ էինք բշում, որպէսզի փոքր ինչ վաղ կարողանանք ճանապարհը կարձել:

Բայադէտից մօտ տասը վերստ անցած մտանք Երանոս գիւղը: Այդտեղ Լեոնի տանը փոքր ինչ հանգիստ առանք, ապա ճանապարհը շարունակեցինք և ժամը մօտ 2-ին հասանք Ադրեաման գիւղը: Երանոսից մեզ ընկերացաւ նոյն գիւղացի բաջարի երիտասարդ Ենովքը:

Ադրեաման թուրքերէն նշանակում է անունը վատ: Ինչով է վատ, ոչ-ոք չբացատրեց: Եւ դժուար էր բացատրելը: Առհասարակ գիւղերի անունները միշտ տարօրինակ են և ինչ ինչ առիթներից, մաքերից կամ հանգամանքներից են առաջ գալիս: Կան շատերը, որոնք բացատրուում են և իմացուում է, որ անունը յարմարացրել են տեղին, զիրքին, ժողովրդի արհեստին, սովորութիւններին, կամ որ և է անսպասելի դէպքի ու արկածի:

Ադրեաման գիւղն, ինչպէս հայկական բոլոր գիւղերն, ընկած է խորթ ու բորդ բլուրների վերայ: Իսկ մի բարձրուղէշ բլրակի վերայ ընկած է Կոթայ կիսաւեր վանքը, որ հաշուում են իբր ութերորդ դարու գործ: Վանքի ամբողջ կամարները թափուել են: Մնացել են խաչաձև չորս խորաններ, որոնք և ամբողջովին կազմում են եկեղեցու մակարդակը: Իսկ եկեղեցին ամբողջ առմամբ Ս. Հռիփսիմէի վանքի ձևն ունի: Աւերակ վանքի շուրջն ընկած է հինաւուրց գերեզմանատուն սբանձելի դրուագազարդ խաչ—քարերով:

Ինչպիսի կոթողներ են ընկած՝ կիսաւեր, արտասուամթոր վիճակի մէջ.— կոթողներ, որոնք դարէդար լուիկ վկաներ են հանդիսացել անցած-գնացած որերոյն և պանծալի հարանց գործերին:

Աւերակ է, իրաւ, բայց իւրաքանչիւր քարը սուրբ է, օծուած է, արիւնով ու քրտինքով է լուացուած: Ինչո՞ւ աչ-

քաթող անել, ինչու ցանկապատ չքաշել և հեռաբերոյս չդարձնել — Պէտք է միթէ խնամք տանել նոյն իսկ այն բազմութիւ գերեզմանաբարերին, որոնցից իւրաքանչիւրը իւր սքանչելի դրուագներով, իւր նուրբ և մանրակրկիտ նկարներով կատարեալ վկայախօսներ են նախնեաց կուլտուրայի զարգացման, ճաշակի նրբութեան, աշխատանքի տոկունութեան և եռուն հաւատի։ Այդ քարերից ընտիրները կարելի է տանել մօտակայ գիւղերի եկեղեցիները և այնտեղ պահել։ Իսկ աւերակ վանքի շուրջը նոյն այդ քարերով հարկաւոր է անպատճառ պարիսպ շինել և չորս իսկ գեղեցկաշէն խորանները անաղարտ պահել։ Այն բլրի ստորոտով, ուր ընկած է վանքը, սահում է Ագրիջա գետը, որի մելամաղձոտ վշշոցը ներդաշնակում էր մեր սրտի մեղրամաղձոտ մրմունջներին։

Ազընամանից ուղեորութեանը դէպ առաջ և պ. Մնացականի խորհրդով որոշեցինք գիշերել Ալըջալու գիւղում։

Ճանապարհը երկայն էր, Իսկ մեր ծարաւը հնար չէր լինում սառը ջրով յագեցնել։ Երեկոյեան դէմ, երբ արեւ մօտեցել էր արեւմտեան լեռներին, երբ պատրաստոււմ էր հրաժեշտի ողջոյնը յայտնել, հասանք Զօլա—խաչ գիւղը։ Գիւղերը բոլորն էլ հայաբնակ են, իսկ այդ գիւղը կոչւում է Զօլա-խաչ, այսինքն երկայն խաչ, գիւղի մէջտեղն ընկած. գրեթէ սաժէն ուկէս երկայնութեամբ մի խաչ-քարի անունով։

Այստեղ մի հայ խանութպանի մօտ մինչև թէյ ձեռք բերինք, մութը տիրեց, Ութ վերստ էլ անցանք և Գեօղալդարայ գեղը ճանապարհի մի կողմում թողնելով, ձիերը բռնեցինք առաջ։

Գիշեր էր։ Սակայն լուսնի արծաթափայլ շողերը հեշտացնում էին մեր ճանապարհը։ Իսկ Գեօղալդարան մի կատարեալ ջրաբաշխ էր. և մենք անցնում էինք բազմութիւ առուակների և գետակների միջով, տեղ-տեղ ջրերի խորքերով, որոնցից փրկութեան յոյան արդէն Աստուծոյ վերայ էր։ Անձնուէր և քաջարի Ենովքի ներկացութիւնն էլ պակաս չէր մեզ ոգևորում։

Գիշերը բաւական անցել էր։ Մենք լուռ, անխօս գնում էինք։ Զիւրի վերայ երկար ճանապարհորդութիւնը տանջել էր մեզ, Երբեմն էլ անցնում էինք այնպիսի նեղ կածաններով, որոնց վերջը չէինք նշմարում։ Լուսինը բաւական անցել էր

փերուզէ երկնականմարի երեսով և հազիւ երկու ժամ էր մնում յուսաստողը բացուելուն։ Հեռուն, ծմակի խորքում, յաւում էր բուռն կռնչոցը, որ աաղտկալի ապաւորութիւն էր թողնում։ Մերթ ընդ մերթ ձիերն էին փռնչում։ Անշուշտ նորանք է դժգոհ էին երկար անհանգիստ լինելուց։ Եւ ձիւս բաշն էի շոյում, խրախուսում նորան։ Բայց և այնպէս հանգստութեան կարօտը սկսում էր տանջել։

Մօտենում էինք Քօլադրան գիւղին։ Պ. Մնացականին, որ մեր արի առաջնորդն էր, խնդրեցինք այդտեղ դիշերել և ձիերը բշեցինք դէպի գիւղ։

Քոլադրանին հայերն ասում են Օձաբերդ։ Սոսկալի է անունը, բայց մենք այնպէս էինք յոգնել, որ վիշապաբերդ անգամ լինէր պէտք էր մնայինք։

Ձիերի ոտների արուփիւնը իսկոյն զարթեցրեց շներին և ամեն կողմից բարձր հաջոցով սկսեցին թափուել մեզ վերայ։ Կանգնած ենք մի մեծածաւալ նկուղի մօտ, որի կից ընկած էր մի սենեակ երեք վանդակամած պատուհաններով։

Դա գիւղի քահանայ տէր-Յուսիկի տունն էր։

Ուղեկիցներս դուռը բաղնում էին, սակայն երկար ժամանակ բաց անող չկար։ Շների աղաղիկ ձայնը վերջապէս դարձեցրել էր մէկին, որ գեղերուայ այդ պահուն ուրուականի պէս շարժում էր տան կտրին։

Պ. Մնացականն ինչ որ անուն յիշեց, ուրուականն իսկոյն անհետացաւ և քանի բոպէ չանցած նկուղի դուռը բացուեց։ Ներսն ազօտ կերպով յուսաւորուած էր նաւթի ճրագով, որի լայն պատրոյգից օղակ-օղակ ծուխը, ժանտ հոտի հետ փռուել էր նկուղի բոլոր կողմերը։

Մի այլ պարօն էլ երևաց, բացաւ սենեակի դուռը, վառեց առաստաղից կախուած յամպան և մենք նորա հրակերով ներս մտանք։

Մտնելուն պէս ծանր հոտով պաշարուեցինք, բայց սենեակի մի անկիւնում դրած փայտէ մահճակալները բոռն հրապոյրով գրաւեցին մեզ, վասն զի քնելու ջերմագին զանկուութիւնը մի կողմից, յոգնածութիւնն էլ միւս կողմից մղում էին մեզ դէպի հանգիստ առնելու մի անկիւն։

Սենեակի պատերը սուաղած չէին, յատակը հող էր, իսկ առաստաղի բաց օձորքներից հօ սպասելի էր օձերի պոցելու

Թիւնը: Ո՛չ ապաքէն Օձաբերդումն ենք, սակայն քունն ամեն բանի յաղթում էր, ամեն բան մոռացութեան տալիս:

Մի բանի ըրողէից ներս մտաւ մեջին Հասակով, պատկառելի գէմբով մի քահանայ, «բարի գտիւստ» մաղթեց ու նշատեց մեզ մօտ:

Դա տան տէրն էր, Տէր Յուսիկը:

Թէյի անուն լսուեց, ապա հնչուեց հեշտաեռի կենարար թշշոցն ու քանի՜ ըրողէից թէյը ոչ միայն ծարաւ յագեցրեց, այլ իսպառ կազդուրեց մեզ: Փոքր ինչ զրոյց ևս, ապա նայեցի դուրս և ինչ. արեւելեան հորիզոնում ժամկոչներն արդէն քունն առել, զարթել էին: Արեգակի վաղորդեան ներքոյն էին երգում, որ նշանակում է թէ քիչ ժամանակ է մնացել նորան իւր առագաստից դուրս գալուն: Աքաղաղներն էլ անդադար կանչում էին: Ուրեմն, օն դէպի Մոսկիտս:

Ուղեկիցներս հանգիստ մտան անկողին, փաթաթուեցին փափուկ վերմակներում, ես անկարող եղայ անկողին ընդունել: Բարեք Համարեցի փաթաթուել իմ պատմական տառատուկի մէջ և ընկնել մահճակալի վերայ:

Սենեկում մնացինք միմիայն ճանապարհորդներս: Ցասը ըրողէ չանցաւ և խաղաղ ուղեկիցներին խոմիոցն արդէն կլարտնտ էին կազմու: Ես դեռ մտածում եմ, որ Օձաբերդումն եմ: Հայեացքս մերթ ընդ մերթ սեւեռում եմ օձորքին: Օձ կերևայ արդեօք: Պատերի վերայ կախուած պատկերներն էլ մի ծիծաղելի կոլլեկցիոն են կազմում, որ ակամայ ուշադրութիւն է գրաւում: Նորանցից մէկը ներկայացնում է Պլեմնայի պատերազմը, մի ուրիշ մի սիրուն աղջիկ՝ բացուած վարդերի մէջ, երրորդը մրգեղէնների մի սկստող զանազան մրգերով, չորրորդը որսորդ անգլիացիներ: Բայազէտի քաղաքակրթութիւնը տարածուել է և շրջակայ գիւղերի մէջ: Ճաշակի համերաշխութիւնը ամենուրեք նկատուում է:

Գիշերն անցնում է: Աքաղաղների երրորդ կանչն էլ լըսուեց, ուրեմն շուտով արշալոյսը կբացուի:

Վերջապէս ժամուկէսուայ քունն ու հանգիստը բաւական եղաւ մեզ:

Առաւօտը բացուեց: Բնութեան համերգը թնդաց ամեն կողմից, Գիւղական առաւօտ է. բնութեան հետ ամենքն էլ զարթել էին: Տղամարդկանցից շատերն արդէն արտերումն էին:

Արտերը հեռու չէին: Այնտեղից լսում էին շինականի անոյշ երգը, որ դիւթիչ գայլայլով հասցնում էր մեզ վզվզուն քաւ միները: Նախիրը բառաչելով հանդէ շտապում: Հնչում է հովուի սրինգը, որին յուշ առած կովերն ու եղջերուքը գլխակոր ընթանում էին: Մի տեղ կարմրագլխոտ աղջիկը կուտ է ցրում հաւերի առաջ. մի այլ տեղ նորահարսը կուտն է սրբում: Մի խումբ հարս ու աղջիկ կուտն ու կուլայ շալակած, ուրախ զբոյց անելով, դէպի աղբիւր են գնում: Զննողներն անդադար ձուլողում են: Ծիծեռնակը յաճախ այցելում է տան կտրի տակ շինած իւր բոյնը, որի մէջ ամեն րոպէ սպասում են իւր դեռափթիթ ձագերը: Կատուն արեւի այ ճաճանչների տակ աչքերը ձգւում է ու թաթիկները լիզելով, երեսը շոյում ու լուանում: Նայում եմ հեռու, դէպի պարզ, կապտագոյն հորիզոնը: Այնտեղ կապոյտ մշուշում ընկած են լեռները՝ գլուխները բարձրացրած իրար ետեւից: Բազէն թեւերը տարածած սաւառնում է լեռներից վեր, ապառ օդի մէջ, ջինջերկնքի ստուերում: Անշուշտ իրանից մեծ է իրանից բախտաւոր նա այլ մէկին չէր համարում: Սպիտակ ու դեղին թիթեռները թռչում էին կանաչ դաշտերի երեսին, սեւ բզեզները իրանց գնդակներն էին շինում: Աղբիւրի քաղցրանուագ կարկաչը ասես գիշերուայ խաւարն է նշաւակում և պաղպաղուն կոհակները վարդավառի պար բռնած, շոյելով ու փայլելով ծաղկոտ ասիերը սլանում էին դէպ առաջ, դէպի ձոր, գտնում էին ընկերներին և իրար գրկած, իրար հետ քաղցրագոյն սիրով միացած, սահում դէպի գետակ, ապա սորա հետ միացած թափւում էին մեծ գետը, որի հետ և միասին նետւում դէպի ծով:

Մի տեղ էլ թռնիրն էին վառել: Բուլայ-բուլայ ծուխը թանձր օդակներով գուրս էր գալիս տափակ կտրի վերայ ընկած լայնաբերան երգիկից ու մաքուր օդի մէջ իսկոյն ցրում, անհետանում: Մի քանի կտոր վարդագոյն ամպեր հիւսիսային կողմից ուղտերի կարաւանների նման դանդաղ ընթացքով սլանում էին դէպի երկնակամարի մէջ տեղը: Իսկ հիւսիսային հորիզոնը իսպառ ծածկուած էր արձագոյն մշուշով և լեռներն այդ կողմում անշնչամարելի էին: Սակայն ո՛ւր են առաջանում այդ ամպի կտորները: Ի՞նչ են որոնում: Կորած հարազատներ՞, ընկերներ՞, թէ սոսկ բաղդի ետեւից են ընկել, թէ գուցէ սուրհանդակներ են և իրանցից մեծ ամպերի գալիքն են հաղոր-

դուստր և փոթորիկ կամ հեղեղ գուշակում: Թէ այս և թէ այն՝ գեղեցիկ էին այդ կտորները կապոյտ երկնքի երեսին: Գիւղական առաւօտ է, ամեն գեղեցկութեամբ լի, ընդթեան հրաշալիքներով ճոխ: Ամեն տեղ և ամենքի մէջ երևում է կեանքը, պարզ անպաճոյճ կեանքը: Եւ այդ բոլորը տեսնելով, սրտի մէջ մի առանձին քաղցրութիւն են զգում, վեհ, բախտաւորութեամբ լի խաղաղութիւն:

Մտայ սենեակ: Ուղեկիցներս զարթել, ոտքի վերայ էին: Հեշտաւորի մօտ բացուած էր նախաճաշի գրախտային սեղանը: Կաթ, մածուն, սեր, կարագ, պանիր, ձու, միրգ աւ հաց զարդարում էին սփռոցի երեսը: Եւ զարդարել էր Յակոբի պէս իւր սեղանի մօտ նստած Յէր-Յուսիկը: Հայը չի կարող չհիւրասիրել: Հիւրասէր բնաւորութիւնը հայի մէջ իւր հետ միասին է ծնւում: Հիւրասիրութիւնը հայի համար գաւառանք է: Իւր տանը հիւր տեսնելը հայն առանձին բաղտաւորութիւն է համարում: Հիւրն ով ուզում է թող լինի: Հիւրասիրութեան զգացմունքը նորան թոյլ չի տալիս ազգերի մէջ խտրութիւն դնել: Հիւրը հայի համար Աստուծու ուղարկած մարդն է: Իսկ Աստուծոյ ուղարկուածին չի կարելի չսիրել: Եւ մենք ամենայն քաղցրութեամբ վայելում էինք Յէր Յուսիկի հիւրասիրութիւնը:

Մնացականը կարծես այդ գիւղացիների պապն էր: Եւ նա չէր զլանում ամեն տեղ և ամենքին իւր բարեկամական խորհուրդները տալ:

Խօսակցութեան մէջ Յէր Յուսիկը յայտնեց, որ իրանց գաւառում ուսումնարանների թիւը շատ քիչ է: Ծաւ ի սիրտ գիւղացիները ոչ նախնական-նահապետական դրութեան մէջ են մնում, ոչ էլ ուսում են ստանում, որ փոքր ի շատէ աշխարհի մասին տեղեկութիւն առնեն և կեանքի դառնագին հոսանքների հետ մրցել կարողանան: Աղքատութիւնը ընդհանրապէս առաջ է գնում: Որ և է պատուհասի կամ ծանր կարիքի ժամանակ գիւղացին օգնութեան դիմելու տեղ չունի: Նորա միջոցը վաշխառուներն են: Իսկ յայտնի է թէ վաշխառուները ինչ օրուան են հասցնում խեղճ, միամիտ գիւղացուն:

Ենովբը արդէն դրսում՝ ձիերն էր պատրաստում: Իւր քաջութեան հետ նա խիստ պահպանել է պատկառանքը և համեստութիւնը: Նորա կամեցածը մեզ հասցրած բալորապտուղ բաւականութիւնն է: Ես իմ հիացումը չէի կարողանում ծած-

կել, երբ այդ երիտասարդ շինականը անկեղծ հետաքրքրութեամբ տեղեկութիւններ էր կամենում ունենալ իւր հեռաւոր եղբայրներին, քայրերին և առհասարակ իւր բոլոր արեւնակիցներին մասին:

Ձիերն իրանց թամբերով արդէն մաքրուած, պատրաստ էին: Այդ մասին մեզ յայտնեց Ենովքը, սակայն մեզ ասել էին որ այդ զիւղում մի շատ հին աւետարան կայ և որ շատ զօրաւոր է, հիւանդներ է բժշկում:

Տէր Եղիսիկի առաջնորդութեամբ գնացինք նախ այդ զօրաւոր աւետարանը տեսնելու:

Գիւղի բակերն անցնելով, մտանք մի կատարեալ լարի՝ մինթոս:

Մի շարք նկուղներ յիշեցնում ու ներկայացնում էին ինձ տառիս պատմած քաւթառ քօսիի պալլատը:

Վերջապէս մտանք մի նկուղ, Պատուհան չկայ: Առաստաղից մի փոքրիկ ծակ լոյս է ներս թողնում և այդ Աստուածառք լուսով լուսաւորում ընդարձակ, ամփիիտէատրի՝ ձևով շինած նկուղը: Մի ծերունի՝ ակէխառն միրուքով, ոչ պատկառելի նայուածքով, այլ կասկածոտ, կիսահեգնող աչքերով դիտելով մեզ, յետ քաշեց պատի մէջ շինած փոքրիկ պահարանի վարդաշրը, մի արկղից հանեց մի փաթեթ և սկսեց բաց անել: Եօթը թաշկինակ հետզհետէ յետ ծալեց և վերջը բացուեց մի ձեռագիր աւետարան, բոլորովին նոր ժամանակի գործ: Եւ այդ աւետարանն այդ իսկ գարշահոտ խրճիթում պահոււմ է իբրեւ սրբութիւն սրբոց, իբրեւ բժշկարան այս ու այն հիւանդութիւնների: Այդտեղ էր և ուխտատեղին: Այդտեղ են գալիս բազմաթիւ ուխտաւորներ, որոնց աւետարանի տէրը մինչև մի լաւ չէ շօշափում գրպանները և չի դուրս կորցում վերջին արծաթն ու պղինձը, չի թողնում մերձենալ աւետարանին:

Այստեղ հարկաւոր է հոգևոր իշխանութեան խորապանը: Ո՛չ ապաքէն աւետարանի անունն այսպէս շահագործելով, շահագործուում է ժողովրդի մաքուր հաւատը և նորա դէպի աւետարանն ունեցած անարատ սէրը:

Նկուղների մէջ այնքան ծանր հոտ էր տիրում, որ իսպառ անգոր եղանք մի բանի բոպէ Բաբելի մնալու: Մինչև իսկ ուխտատեղին էլ չկարողացաւ մեզ շունչ տալ, և մենք դուրս ե-

կանք այդտեղից, խեղճ, միամիտ ժողովուրդը մեր աչքի առաջ պատկերացնելով:

Յունիսեան արեգակը օրքան էլ այդ կողմերում զօրեղ չէր, բայց այդ օրը աշխատում էր փոքր ինչ աւելացնելու իւր ջերմութիւնը: Արեւելեան լեռներից բաւական բարձրացել էր և արքայական ընթացքով անցել ջինջ երկնակամարի երեսը:

Մեզ հիւրասիրող Տէր-Յուսիկին և մեզ շրջապատած զիւղացիներին «մնաք բարեն» ասացինք, հեծանք ձիերն ու ճանապարհ ընկանք:

ԱՐՇԱԿ ԿԱՅԵՈՒՆԻ

(Վերջը միւս անգամ)